*Քննարկված է*
*«Գեղարքունիքի տարածաշրջանային*
*պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի*
*կառավարման խորհրդի*
*«11» «01» 2022 թ. նիստում*

*Հաստատված է*
*«Գեղարքունիքի տարածաշրջանային*
*պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի*
*տնօրեն*

# «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»
## ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

## ԴԱՍԱԽՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ /լրացում/

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» N 48-Ն հրամանի հավելվածով հաստատված կարգի.

1) 4-րդ կետից հետո լրացնել նոր 4.1 և 4.2 կետերը՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1 Սույն կարգի 4-րդ կետով սահմանված համապատասխան անձ չլինելու և սույն կարգով սահմանված 2 անգամ հայտարարված մրցույթին համապատասխան Մանկավարժի չմասնակցելու դեպքում՝ տնօրենը կարող է մինչև տվյալ ուսումնական տարվա կիսամյակի ավարտը կնքել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր այն անձի հետ, ով ունի՝

ա) վերջին 10 տարվա ընթացքում 2 տարվա տվյալ մասնագիտությամբ աշխատանքային փորձ, կամ

բ) վերջին 5 տարվա ընթացքում տվյալ մասնագիտությամբ վերապատրաստման վկայական՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից երաշխավորված ուսուցման ծրագրով:

4.2 Սույն կարգի 4.1 կետով սահմանված Մանկավարժի պաշտոնը զբաղեցված լինելու դեպքում, մրցույթում հաղթող ճանաչված Մասնակցի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որն ուժի մեջ է մտնում որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի ժամկետի ավարտին հաջորդող կիսամյակի առաջին օրվանից:

2) 11-րդ կետում «զբաղվածության ծառայությանը» բառերը փոխարինել «Միասնական սոցիալական ծառայությանը» բառերով:

3) 13-րդ կետում «ընթացքում» բառից հետո լրացնել «, իսկ մրցույթը կազմակերպվում է փաստաթղթերի ընդունման ավարտման օրվանից հետո՝ երրորդ աշխատանքային օրը:»: բառերը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: